Արձանագրություն N 3

ՄՄԱՌՎ –ԳՀԱՊՁԲ-19/5 **ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով** *գնանշման հարցման* **ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Դիլիջան 11/03/ 2019թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռազմամարզական գծով փոխտնօրեն Ա.Մինասյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Հաշվապահ Ռ.Քոչարյան
Գրադարանավար Ք. Խաչատրյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գործավար Ս.Գրիգորյան
Տնօրենի օգնական Ա.Ադամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին
3. Գնահատման մասին
4. Հարցում կատարելու մասին
5. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

ՀՀ դրամ

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ			Նախահաշիվ			Սմարթլայն ՍՊԸ		
№	Գնման առարկա	չափման միավոր	քանակ	միավորի գին	գումար	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	գումար
1	հաշվասարք, գրասենյակային	հատ	250	700	175000			
2	ռետին հասարակ	հատ	400	20	8000	20000	4000	24000
3	թանաքի բարձիկներ	հատ	2	950	1900			
4	թանաք, կնիքի բարձիկի	հատ	5	350	1750			

	համար							
5	գրիչ գնդիկավոր	հատ	2000	50	100000	83333.33	16666.67	100000
6	գրիչ գնդիկավոր	հատ	300	150	45000	13750	2750	16500
7	գրիչ գնդիկավոր	հատ	500	70	35000	22916.67	4583.333	27500
8	մարկերներ	հատ	800	600	480000			
9	մարկերներ	հատ	200	450	90000			
10	գրիչ գելային	հատ	200	100	20000	16666.67	3333.33	20000
11	մատիտներ	հատ	250	50	12500			
12	մեխանիկական կամ սրվող մատիտներ	հատ	50	100	5000			
13	սրիչներ	հատ	50	24	1200			
14	շտրիխներ	հատ	10	300	3000			
15	գրենական պիտույքներ	հատ	10	1300	13000	25000	5000	30000
16	ֆլոմաստերների հավաքածու	տուփ	300	200	60000			
17	գծագրական թուղթ	կիլոգրամ	20	120	2400			
18	կարիչի մետաղալարե կապեր, մեծ	տուփ	20	200	4000			
19	կարիչի մետաղալարե կապեր, միջին	տուփ	50	65	3250			
20	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	հատ	1000	15	15000			
21	թղթապանակ, արագակար, թղթյա	հատ	100	50	5000			
22	թղթապանակ, թելով, թղթյա	հատ	100	150	15000			
23	թղթապանակ, կոշտ կազմով	հատ	25	600	15000			
24	կարիչ, 20-50 թերթի համար	հատ	10	700	7000	26666.67	5333.333	32000
25	դակիչ միջին	հատ	10	420	4200	20833.33	4166.667	25000
26	թուղթ, կավճած, A4 ձ—աչափի	կիլոգրամ	400	2500	1000000	220000	44000	264000

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի բացման նիստի արդյունքում 1,3,4,8,9,11,12,13,14,16,17,18,19,20,21,22,23 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Քանի որ 2,15,24,25 չափաբաժինների համար՝ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. մարտի 7-ին ժամը 14:00-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

2019 թվականի մարտի 7-ին ժամը 14:00-ին մասնակցի կողմից 5,10-րդ չափաբաժինների համար ներկայացվել են նոր գնային առաջարկներ, իսկ 2,15,24,25 չափաբաժինների համար չի

ներկայացվել նոր իջեցված գնային առաջարկներ, ուստի 2,15,24,25 չափաբաժինները համարել չկայացած:

Այսպիսով ՄՄԱՌՎ –ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգ վերոնշյալ չափաբաժինների մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.Գնահատման մասին

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	Սմարթլայն ՍՊԸ	5,6,7,10,26

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Հարցում կատարելու մասին

ՄՄԱՌՎ –ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 8.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. *Գնանշման հարցման* միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել *ՄՄԱՌՎ -ԳՀԱՊՁԲ-19/5* ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը մարտի 14-ին ժամը 15:00-ի շենք՝ ՀՀ, Դիլիջան քաղաք, Պարզ լճի 5, 24/1 և 26/1 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝
Ռազմամարզական գծով փոխտնօրեն Ա.Մինասյան

Բացող անդամներ՝

Հաշվապահ Ռ.Քոչարյան

Գրադարանավար Ք. Խաչատրյան

Գնահատող անդամներ՝

Գործավար Ս.Գրիգորյան

Տնօրենի օգնական Ա.Ադամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Նավասարդյան